Ենթակա է հրապարակման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2019թ. մայիսի 27-29-ը Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն) գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանունը՝

Ավագ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի նախկին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն)՝ 2019թ. մայիսի 27-29-ը

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով (ՄԱԿԵՏՀ)

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿԵՏՀ) Առևտրային կարողությունների և կարգավորումների կոմիտեի նիստին

6. Քննարկված թեմաները՝

ՄԱԿԵՏՀ-ի Առևտրային կարողությունների և կարգավորումների կոմիտեի նիստի ընթացքում քննարկվել են՝

- «Հայաստանի Հանրապետության առևտրի կարգավորիչ և ընթացակարգային խոչընդոտների վերացում՝ կարիքների գնահատում» ուսումնասիրությունը և համապատասխան խորհուրդները/ առաջարկությունները,
- Սերբիայի՝ առևտրի կարգավորող և ընթացակարգային խոչընդոտների վերաբերյալ զեկույցի ուղղությամբ ընթացիկ աշխատանքները,
- Տարածաշրջանային երկրներում՝ Բելառուս, Վրաստան, Ղազախստան, Մոլդովա և Ղրղզստան, կատարված համապատասխան

ուսումնասիրությունների ընթացիկ աշխատանքների վերաբերյալ զեկույցները՝ ներառյալ ՄԱԿԵՏՀ կողմից լրացուցիչ խորհուրդները,

- ՄԱԿԵՏՀ հետ համագործակցող միջազգային կազմակերպությունների և ՄԱԿԵՏՀ աշխատանքային խմբերի ընթացիկ զեկույցները;

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՄԱԿԵՏՀ-ի Առևտրային կարողությունների և կարգավորումների կոմիտեի (Կոմիտե) 5-րդ նիստին մասնակցում էին ՄԱԿԵՏՀ անդամ մի շարք երկրների (Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Իտալիա, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Ուկրաինա և Միացյալ Թագավորություն) ներկայացուցիչները, Եվրոպական Միության, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (ՄԱԿԱԶՀ), ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող գրասենյակի, Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի և Իրավական չափագիտության միջազգային կազմակերպության, Իտալիայի հավատարմագրման ազգային մարմնի և Մոլդովայի Հանրապետության Ազգային հավատարմագրման կենտրոնի ներկայացուցիչները:

ՄԱԿԵՏՀ քարտուղարության կողմից ներկայացվեցին կատարված և ընթացիկ աշխատանքները, ինչպես նաև ՄԱԿԵՏՀ Գործադիր կոմիտեի նիստի արդյունքները:

ՄԱԿԵՏՀ քարտուղարությունը ներկայացրեց նաև ՀՀ-ում իրականացված առևտրի կարգավորող և ընթացակարգային խոչընդոտների վերաբերյալ զեկույցը, որն իրականացվել էր 2017թ. հոկտեմբերից 2019թ. հունվար ընկած ժամանակահատվածում: Նշվեց, որ զեկույցը վերհանել է կարգավորող և ընթացակարգային խոչընդոտներից բխող առևտրի զարգացումը սահմանափակող ազդեցությունները՝ օգտագործելով հարցումների վրա հիմնված ՄԱԿԵՏՀ էքստենսիվ գնահատման մեթոդաբանությունը՝ հիմնվելով պետական կառավարման մարմինների և գերատեսչությունների, գործարարությանն աջակցող հաստատությունների, բեռնափոխադրման ծառայություններ մատուցող կազմակերպությունների և 91 ձեռնարկությունների հետ հարցազրույցների վրա: Զեկույցը տրամադրում է խորհուրդներ/առաջարկություններ՝ ուղղված խոչընդոտների վերացման նպատակով ՀՀ-ում իրականացվելիք քայլերին և համապատասխան մարմինների կարողությունների զարգացմանը:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալն իր ելույթում շնորհակալություն հայտնեց ՄԱԿԵՏՀ-ին՝ զեկույցի պատրաստման ուղղությամբ իրականացված աշխատանքների համար, հույս հայտնեց, որ միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ հնարավոր կլինի ՄԱԿԵՏՀ խորհուրդների/առաջարկությունների իրականացմամբ վերացնել զեկույցում վերհանված առևտրին խոչընդոտող հանգամանքները, ինչը կնպաստի արտահանման դիվերսիֆիկացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և աղքատության կրճատմանը: Ներկայացվեց ՀՀ-ում տնտեսական զարգացման ուղղությամբ իրականացված և նախատեսվող բարեփոխումները, նշվեցին առևտրի դյուրացման ուղղությամբ ՄԱԿԵՏՀ

զեկույցում ամրագրված դրական արդյունքները, այն է՝ առևտրի ընթացակարգերի թափանցիկության բարձր աստիճանը, մաքսային հայտարարագրերի և առևտրի հավաստագրերի էլեկտրոնային տրամադրման, ինչպես նաև մաքսային բացթողման նպատակով միասնականացված սահմանային կառավարման արդյունավետ համակարգերը, ՀՀ-ից ԵՄ և ԵԱՏՄ ամենաշատ արտահանվող ապրանքների ուժեղ մրցակցային դիրքը, ԵՄ կողմից ՀՀ-ին տրամադրվող արտոնությունների ընդհանրացված համակարգի օգտագործումը և այլն:

Նախարարի տեղակալը կարևորեց զեկույցում վերհանված խոչընդոտների վերացման ուղղությամբ աշխատանքները, ևս մեկ անգամ կարևորվեց ՄԱԿԵՏՀ խորհուրդների իրականացման ուղղությամբ միջազգային կազմակերպությունների օժանդակության կարևորությունը:

Այնուհետև ելույթ ունեցան ՀՀ պատվիրակության մյուս անդամները (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից, ՀՀ պետական եկամուտների կոմիտեից և ՀՀ սննդի անվտանգության տեսչությունից)՝ կոմիտեին ներկայացնելով իրենց ոլորտներում իրականցված և իրականացվող բարեփոխումները, ՄԱԿԵՏՀ խորհուրդների իրականացման համար առաջնային խնդիրները և անհրաժեշտ օժանդակության կարիքները:

Կոմիտեի մասնակիցների կողմից հնչեցվեցին հարցեր, որոնց ՀՀ պատվիրակության կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Վրաստանի մաքսային ծառայության ներկայացուցիչը պատրաստակամություն հայտնեց քննարկել և օժանդակություն տրամադրել հայկական կողմին՝ ՀՀ գործարարների համար ավելի հասանելի և պարզ դարձնելու ապրանքների տարանցման վերաբերյալ Վրաստանի ընթացակարգերը և պահանջները:

Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի և Իրավական չափագիտության միջազգային կազմակերպության ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց ոլորտներում իրականացվող աշխատանքները, ինչպես նաև ՄԱԿԵՏՀ խորհուրդների իրականացման ուղղությամբ հնարավոր աջակցության ուղղությունները:

ՀՀ-ում ՄԱԿ-ի մշտական համակարգող գրասենյակի ներկայացուցիչը նշեց, որ գրասենյակի կիզակետում է Հայաստանում ՄԱԿ-ի կողմից ամբողջական աջակցության որպես մեկ գործընթացի իրականացումը: Գրասենյակը նաև աշխատանքներ կտանի ՄԱԿԵՏՀ և ՀՀ հետ՝ ուսումնասիրության խորհուրդների/առաջարկությունների իրականացման ուղղությամբ ռեսուրսներ ներգրավելու ուղղությամբ:

ՄԱԿԵՏՀ կայուն տրանսպորտի ստորաբաժանման ներկայացուցիչը ներկայացրեց ճանապարհային տրանսպորտի և բեռնափոխադրումների վերաբերյալ մի շարք միջազգային համաձայնագրեր և արձանագրություններ, որոնց ցանկության դեպքում ՀՀ կարող է անդամակցել՝ մասնավորապես Փչացող սննդամթերքի միջազգային փոխադրման և նման փոխադրումների նպատակով օգտագործվող հատուկ սարքավորումների վերաբերյալ ՄԱԿԵՏՀ Համաձայնագիրը՝ նշելով ստորաբաժանման պատրաստակամությունը աջակցելու ՀՀ-ի՝ ՄԱԿԵՏՀ զեկույցում նշված համաձայնագրերին անդամակցությանը:

ՄԱԿԵՏՀ Պետական մասնավոր համագործակցության Աշխատանքային խմբի ներկայացուցիչը ներկայացրեց ոլորտի ուղղությամբ ՄԱԿԵՏՀ հիմնական սկզբունքները, որոնք նպատակ ունեն ծրագրերի ֆինանսավորման ընթացքում ապահովելու թափանցիկությունը և կոռուպցիայի բացառությունը:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալը շնորհակալություն հայտնեց ելույթ ունեցած բոլոր մասնակիցներին և հայտնեց, որ Հայաստանը ՄԱԿԵՏՀ Կոմիտեի հաջորդ նիստին կզեկուցի խորհուրդների իրականացման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին:

Նիստի ընթացքում ներկայացվեց ՄԱԿԵՏՀ կողմից Սերբիայում իրականացվող առևտրի կարգավորող և ընթացակարգային խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրության ընթացքը:

Վրաստանի, Մոլդովայի, Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի պատվիրակությունները ներկայացրեցին իրենց երկրներում իրականացված առևտրի կարգավորող և ընթացակարգային խոչընդոտների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված խորհուրդների իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Կոմիտեի նիստին ներկա կազմակերպությունների և կառույցների ներկայացուցիչները, ինչպես նաև ՄԱԿԵՏՀ քարտուղարությունը և ՄԱԿԵՏՀ տարբեր աշխատանքային խմբերի ներկայացուցիչները տեղեկացրեցին ընթացիկ և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ:

Մինչ կոմիտեի նիստի մեկնարկը հայկական պատվիրակությունը հանդիպում է ունեցել ՄԱԿԵՏՀ-ի քարտուղարության պատասխանատու ներկայացուցիչների հետ: Քննարկվել են «Առևտրի կարգավորող և ընթացակարգային խոչընդոտները Հայաստանում» ուսումնասիրության և հետագա քայլերի ապահովմանն առնչվող հարցեր:

Առանձին հանդիպում կայացավ Իրավական չափագիտության միջազգային կազմակերպության տնօրեն Անտոնի Դոննելլանի հետ, որին ներկա էին նաև ՀՀ պատվիրակության անդամները: Ա. Դոննելլանը ներկայացրեց Իրավական չափագիտության միջազգային կազմակերպության աշխատանքների ոլորտը, կազմակերպությանն անդամակցելու հնարավոր օգուտները, տարբերակները և պայմանները՝ հույս հայտնելով, որ ՀՀ-ն կորոշի անդամակցել կազմակերպությանը: Ա. Դոննելլանը տեղեկացրեց, որ պատրաստ է ՀՀ գործուղել համապատասխան փորձագետների՝ գնահատելու և զեկուցելու անդամակցության կամ ազգային չափագիտության համակարգ ստեղծելու միջև առավել քիչ ծախսատար տարբերակը: Հայկական կողմը նշեց, որ անդամակցության հետ կապված փաստաթղթերի ուսումնասիրության ավարտից հետո կապ կհաստատեն Իրավական չափագիտության միջազգային կազմակերպության հետ՝ հետագա գործընթացները ճշգրտելու նպատակով:

Երկկողմ հանդիպում կայացավ նաև Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի ներկայացուցիչ Անտուանետ Պիտտելոի հետ: Քննարկվեցին Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի հետ ընթացիկ

համագործակցությունը և հետագա համագործակցության տարբերակները և հեռանկարները:

Առանձին հանդիպում կայացավ նաև ԱՀԿ Շուկայի մատչելիության ստորաբաժանման պատասխանատու ներկայացուցիչ Սիաոբինգ Տանգի հետ: Քննարկման առարկան ԱՀԿ տեղեկատվական տեխնոլոգիաների մասին համաձայնագրին ՀՀ հնարավոր անդամակցությունն էր: Ս. Տանգը ներկայացրեց անդամակցության գործընթացը և առաջնահերթ աշխատանքները: Հայկական կողմը նշեց համաձայնագրին անդամակցելու հետաքրքրվածության մասին և այդ նպատակով ճշգրտվեցին անհրաժեշտ հետագա քայլերն ու աշխատանքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման ընթացքում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

04.06.2019թ.